«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի 2022-2026 թթ. ռազմավարական պլանի 2024 թվականի գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Համաձայն ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի 16.03.2024 թ. թիվ 72 արձանագրության 2-րդ հավելվածի)

15.02.2025

Հաշվետու ժամանակահատվածում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր գործունեությունն իրականացրել է 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրից բխող կարճաժամկետ պլանի համաձայն՝ կարևորելով կրթության որակը և նրա շարունակական բարելավումը: Մասնաճյուղը հավատարիմ է մնացել իր առաքելությանը, և իր գործունեությամբ ձգտել է հասնել ծրագրով նախանշած նպատակներին:

2022-2026թթ. ռազմավարական զարգացման պլանը ներառել է 3 ռազմավարական նպատակ՝ բարձրորակ կրթություն, գիտություն և նորարարություն, հանրային ներգրավում:

2024 թվականի կարճաժամկետ պլանով նախատեսված է եղել երեք նպատակների ամփոփ 15 խնդիր, 34 գործողություն (հիմք՝ գիտխորհրդի 16.03.2024 թ. թիվ 72 նիստ, հավելված 2):

Ժամանակացույցով նախատեսված պլանը հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **68%** -ով: 21 գործողություն իրականացվել է ամբողջությամբ, 2 գործողություն մասամբ, 11 գործողություն չի իրականացվել, որոնցից 6 գործողությունը նախատեսվում է իրականացնել հաջորդող ռամավարական պլանով, 4 գործողություն չի իրականացվել տարբեր ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, 1 գործողություն հնարավոր չէ իրականացնել մասնաճյուղի անկախ ուսումնական հաստատություն չլինելու պատճառով:

Կատարողականի առավել բարձր ցուցանիշ ունենք նպատակ 1-ում՝ բարձրորակ կրթություն, ավելի ընդգծված խնդիրներ առկա են 2-րդ և 3-րդ նպատակներում՝ լրացուցիչ կրթական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների իրականացման ոլորտներում:

Ռազմավարական զարգացման պլանի առաջին նպատակով մասնաճյուղը նախատեսել է ապահովել որակյալ և բարձրորակ կրթություն:

Այս նպատակի համար պլանավորված 5 խնդիրները իրականացվել են 86%-ով: Նախատեսված 15 գործողություններից 1-ը կատարվել է մասամբ՝ 6,6%, 1 գործողություն չի իրականացվել՝ 6,6%:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում անցկացվող տարբեր միջոցառումների ու նախաձեռնությունների շարքը, որոնք ուղղված են ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը և մշակութային, կրթական ծրագրերի իրականացմանը: Այն ներկայացնում է ոչ միայն կրթական գործընթացը, այլ նաև տարբեր մշակութային և ստեղծագործական

ցուցահանդեսների, մրցույթների ու տոնավաճառների անցկացումը, որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական և հասարակական ակտիվության բարձրացմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ակտիվորեն մասնակցում է բարձրագույն կրթության կարևորության բարձրացմանը՝ կազմակերպելով հանդիպումներ և դասախոսություններ տարբեր դպրոցներում: Դրանք ծավալվում են ոչ միայն մասնագիտությունների և կրթական ծրագրերի ներկայացմամբ, այլ նաև մասնագիտական խորհրդատվությամբ, որի միջոցով աշակերտներին օգնում են հստակեցնելու իրենց ապագա մասնագիտական ընտրությունը: Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը իրականացրել է **65** հանդիպում և **26** դասախոսություն մարզի **16** դպրոցներում:

Մասնագիտական կողմնորոշման միջոցառումների շարքը ներառում է տարբեր դպրոցների աշակերտների հետ հանդիպումներ, որոնք պարբերաբար գնահատվում են՝ հասկանալու նրանց հետաքրքրությունները և սպասելիքները: «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի հետ համագործակցությամբ «Հոգեբանություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողները Բերդի և Դիլիջանի ավագ դպրոցների, Իջևանի վարժարանի, Հաղարծին և Ազատամուտ գյուղերի միջնակարգ դպրոցների 2024թ. շրջանավարտների շրջանում կատարել են մասնագիտական կողմնորոշման թեստավորման աշխատանքներ, նպատակ ունենալով նախ պարզել աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, կարողությունների զարգացման մակարդակը, անհատական հատկանիշները, իսկ արդյունքների քննարկմամբ նաև ընտրված մասնագիտության համապատասխանությունը, ապա հաշվի առնելով աշակերտների անհատականության առանձնահատկությունները և աշխատաշուկայի սոցիալ-տնտեսական իրավիճակը, օգնելու երիտասարդներին ապագա մասնագիտության և աշխատանքի նկատմամբ ձևավորել գիտակցված վերաբերմունք:

Իջևանի մասնաճյուղը չի սահմանափակվում միայն դասախոսություններով և մասնագիտական խորհրդատվությամբ՝ այն նաև իրականացնում է մշակութային նախագծեր, որոնք նպաստում են ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Աշնանային դպրոցներ, ցուցահանդեսներ, մրցույթներ և արվեստի տոնավաճառներ՝ այս բոլորը ցույց են տալիս, որ կրթությունը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում համակցվում է մշակութային ակտիվությամբ, որն էլ ստեղծում է ուսանողներին ընդգրկող լայն հնարավորություններ՝ ինչպես մտավոր, այնպես էլ ստեղծագործական տեսանկյունից:

Միջոցառումները նաև նպատակ ունեն ամրապնդելու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելությունը, խթանել ուսանողների ակտիվ մասնակցությունը տարբեր ոլորտներում՝ սկսած մշակույթից մինչև հասարակական կարևորություն ունեցող հարցերի քննարկում:

Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը տարբեր ցուցահանդեսներին և մրցույթներին ցույց է տալիս նրանց ակտիվությունը և պատրաստակամությունը դրսևորելու իրենց ստեղծագործական ունակությունները։

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը նաև ներկայացնում է իր կապերը հասարակական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ՝ ստեղծելով համագործակցության հարթակներ, որտեղ ուսանողները կարող են հանդես գալ որպես հասարակական կյանքին մասնակցող ակտիվ դերակատարներ։ Դրան կարելի է վերագրել «Մշակույթների հանդիպում» հայրենաճանաչողական ծրագիրը, «Երիտասարդներն ընդդեմ կոռուպցիայի» ցուցահանդեսը, ինչպես նաև այլ ձեռնարկներ, որոնք ուղղված են ոչ միայն կրթությանը, այլ նաև հասարակական խնդիրներին։

Մասնաճյուղում արդեն երկրորդ տարին մշակվել են նախապատրաստական դասընթացների փաթեթներ, պլաններ, 2024 թվականի սեպտեմբերին տեղադրվել են նախապատրաստական դասընթացների իրականացման հայտարարություններ։ Սակայն դասընթացներ **չեն կայացել,** դիմորդների բացակայության պատճառով։ Վերջինս պայմանավորված է մարզում, մասնավորապես դպրոցներում, կրկնուսույցների մեծ քանակությամբ։

Ընդհանուր առմամբ, մասնաճյուղը հետևողականորեն աշխատել է բարձրացնելու ուսանողների և դասախոսների աշխատանքային պայմանները՝ ինտեգրելով ժամանակակից տեխնոլոգիաներ, մասնագիտական սարքավորումներ և համապատասխան սրահներ:

Մասնաճյուղում առկա են 22 արդիականացված լսարաններ և սրահներ, որոնք կազմում են ընդհանուր լսարանային ֆոնդի 39%-ը, ցույց են տալիս, որ մասնաճյուղը մեծապես կենտրոնացած է ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու վրա։ Այս մոտեցումը կարող է բարձրացնել դասերի որակը, ուսանողների արդյունավետությունը և հաղորդակցման մակարդակը։

Համակարգչային սրահներ: Մասնաճյուղում գործում է 4 համակարգչային սրահ, որոնք ունեն անհրաժեշտ թվով համակարգիչներ և մասնագիտական ծրագրային ապահովում։ Տվյալները փաստում են, որ տեխնոլոգիաների կիրառումը հասանելի է բոլոր ուսանողներին, ինչը կարևոր է հատկապես տեխնիկական և գիտական մասնագիտությունների համար։

Ամբողջ մասնաճյուղում գործում է անվճար գերարագ ինտերնետ կապ, ինչը շատ կարևոր է ուսանողների համար՝ հատկապես նրանց, ովքեր աշխատում են դասընթացների և նախագծերի վրա, պահանջում են մշտական կապ և տեխնիկական աջակցություն։ Գերարագ

ինտերնետը նաև ստեղծում է հիմքեր՝ արագ մուտք գործելու գլոբալ ռեսուրսներ և բազաներ, որ անհրաժեշտ են թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին։

Գործում են 2 մասնագիտական լաբորատորիաներ (ֆիզիկայի և ռոբոտատեխնիկայի), ինչպես նաև նորաբաց թվային անվտանգության կենտրոն: Այսպիսի լաբորատորիաների առկայությունը փաստում է մասնաճյուղի միտումը՝ արդիականացնելու ուսումնական ռեսուրսները՝ հաշվի առնելով ոլորտի մասնագիտական պահանջները և նորարարական տեխնոլոգիաները։ Բացի այդ, պրոյեկտորով լսարաններն ապահովում են տեսողական տեղեկատվության ավելի լավ փոխանցում, ինչը կարևոր է, երբ ուսումնական նյութը ներկայացվում է վիզուալ տարբերակով։

Կիրառական արվեստի ֆակուլտետում, ուսանողների և դասախոսների արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով թարմացվել են արվեստանոցների գույքը՝ ձեռք բերելով նկարիչների համար նոր տեսակի անհրաժեշտ պարագաներ (նկարակալներ, նյութեր)։ Բացի այդ գործում են նաև մասնագիտացված արվեստանոցներ (փայտ, մետաղ, քանդակագործություն, խեցեգործություն), որոնք հարմարեցված են ուսանողների պրակտիկ աշխատանքների համար։ Խեցեգործական վառարանի կարգավորումը նշվում է որպես կարևոր ձեռքբերում, որը նպաստում է այս արվեստի զարգացմանը։

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը համալրվել է 17 մոնոբլոկ համակարգիչներով, smart TV-ներով, ինչպես նաև տպիչներով և բազմաֆունկցիոնալ սարքերով։ Այս տեխնիկական օժանդակությունը զգալիորեն բարելավում է ուսուցման գործընթացը՝ ապահովելով բավարար թվով գործիքներ թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների համար։

Հասանելիություն Միջազգային գրադարանային ցանցերին.

Մասնաճյուղի աշխատակիցները և ուսանողները համալսարանական էլ. հասցեների միջոցով ստանում են թույլտվություն միանալու բոլոր այն միջազգային գրադարանների ցանցերին, որոնց միացած է ԵՊՀ-ն։ ԵՊՀ-ն ներկա պահին հասանելիություն ունի շուրջ **3 տասնյակ** գրադարանների։

Արտալսարանային գործունեության համար կահավորված հատուկ տարածքների ստեղծում.

Համագործակցությունների շրջանակներում մասնաճյուղում գործում են Գիտությունների նորարարական ՀԱԲ-ը՝ ներկայիս Վիքիմեդիա Հայաստանի Իջևանի վիքիակումբ, Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնը, Անգլերեն լեզվի ռեսուրս կենտրոնը, Ֆրանսերեն լեզվի կենտրոնը, որը վերանվանվեց Ա.Մարդանյանի անվ. լսարանի, Շիրակ Գասպարյանի անվ.

լսարանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցները և արհեստանոցները։ Վերջիններս կահավորված են և վերազինված են անհրաժեշտ տեխնիկայով և սարքեր-սարքավորումներով։

Դասախոսական կազմի վերապատրաստում՝ ուղղված հետազոտական կարողությունների զարգացմանը.

2023-2024 ուստարվա ընթացքում դասախոսական կազմի հետազոտական կարողությունները զարգացնելուն միտված վերապատրաստումներ **չեն իրականացվել**, սակայն 2024-25 ուստարվա համար նախատեսվում են մի քանի վերապատրաստումներ հետազոտական կարողությունների զարգացմանը միտված։

Ուսումնաօժանդակ համակազմի վերապատրաստում.

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են մի շարք վերապատրաստումներ, որոնք նախատեսված են եղել ուսումնաօժանդակ համակազմի համար՝ «Ինչպես պատրաստել գրավիչ և արդյունավետ ցուցադրություն», «Կորպորատիվ կառավարում, մշակույթը, սկզբունքներն ու պահանջները», «Կազմակերպությունների հզորացման գործոնները», «Supervision.ysu.am» ծրագրով աշխատելու հմտություններ» թեմաներով։

Մասնագիտական աճին նպաստող խրախուսման նոր ձևերի ներդնում.

Արդեն երկրորդ անգամ մասնաճյուղում կազմակերպվում է «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթը, որի արդյունքում Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, ֆ.գ.թ. Ս. Ազարյանը ճանաչվել է հաղթող «Բնական գիտություններ» մասնագիտությունների անվանակարգում, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի պրոֆեսոր, վարիչի ժ/պ, ա.գ.թ. Գ.Հովհաննիսյանը՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությունների անվանակարգում։ Գնահատականների գերակշռությամբ Գ. Հովհաննիսյանը ճանաչվել է նաև մրցույթի հաղթող։

Մասնագիտական աճի խրախուսման նպատակով տրվում են լրավճարներ գիտահետազոտական աշխատանքների կատարման, հոդվածների տպագրման կամ ղեկավարման համար, արդեն նաև տեղական ամառային դպրոցների/գիտաժողովների կազմակերպման համար։ ԵՊՀ ԻՄ երիտասարդ հետազոտողները կարողանում են օգտվել նաև ԵՊՀ աջակցության ծրագրերից։

Հաշվետու ժամանակահատվածում **չի իրականացվել** անձնակազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգի ներդրումը: Վերջինս նախատեսվում է իրականացնել 2025 թվականին՝ ԵՊՀ կողմից համակարգի մշակումից հետ:

Մասնաճյուղը 2024 թվականին ակտիվորեն ներգրավվել է միջազգային համագործակցության մեջ՝ կնքելով մի շարք համագործակցության համաձայնագրեր ու փոխըմբռնման հուշագրեր տարբեր համալսարանների և ինստիտուտների հետ.

- Նոր բուլղարական համալսարանի հետ (26.02.2024)
- Սլովակիայի Բանսկա-Բիստրիցայի Մատեյ Բելի անվան համալսարանի հետ (12.03.2024)
- ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ (22.04.2024)
- Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների ինստիտուտի հետ (22.04.2024)
- Սմոլենսկի համալսարանի հետ (22.12.2024)
- «Փրոջեքթ Հարմոնի» Իջևանի մասնաճյուղի հետ (19.01.2024)
- «Դիլիջան Դևելոփմենթ» հիմնադրամի հետ (12.02.2024)

Այս համագործակցությունները նպաստում են մասնաճյուղի միջազգային ճանաչմանը, ինչպես նաև կրթական ու հետազոտական գործունեության ամրապնդմանը: Դրանք բացում են նոր հեռանկարներ՝ ինչպես ծրագրային գործունեության, այնպես էլ գիտահետազոտական ու կրթական փոխանակումների տեսակետից:

Մասնաճյուղը ներգրավված է եղել մեկ միջազգային դրամաշնորհային ծրագրում: Դրանով ապահովել է ֆինանսական աջակցություն, որը կարող է օգտագործվել ծրագրերի իրականացման համար: 2025 թվականի համար նախատեսված վերապատրաստումների ծրագիրը նախատեսում է մասնաճյուղի աշխատակիցներին ծանոթացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերին դիմելու նրբություններին, ինչը կբարձրացնի միջազգային դրամաշնորհներում հաղթելու հավանականությունը:

Մասնաճյուղը 2024 թվականին ներդրել կամ ընդլայնել է մի շարք էլեկտրոնային գործիքներ՝ կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Moodle համակարգում ներդրվել է մասնագիտական պրակտիկան, որը հաջող իրականացվել է և կշարունակի գործել ապագայում:

Mulberry, e-request, supervision, intranet, registrar և այլ համակարգերը ընդլայնվել են և ձեռք են բերել նոր հնարավորություններ՝ ապահովելով ուսանողների և աշխատակիցների կողմից առավել հեշտ ու արագ սպասարկում:

Տեխնոլոգիական այս նորամուծությունները համահունչ են ժամանակակից կրթական պահանջներին և դառնում են կրթության որակի բարձրացման կարևոր բաղադրիչ: Ուսանողների և դասախոսների համար այս համակարգերը ստեղծում են բարենպաստ աշխատանքային միջավայր, որը հեշտացնում է ուսումնական գործընթացը, տվյալների ու տեղեկատվության հասանելիությունը:

ԵՊՀ ԻՄ ռազմավարական **երկրորդ նպատակը միտված** է Գիտության և նորարարության զարգացմանը և ապահովմանը:

Այս ոլորտում մասնաճյուղի խնդիրները ամենաակնառուն են, քանի որ մասնաճյուղը ապահովված չէ մեծ ռեսուրսներով և հնարավորություններով գիտահետազոտական գործունեության իրականացման համար:

Այս ոլորտում մասնաճյուղի հիմնական խնդիրները պայմանավորված էին ամառային դպրոցների, գիտաժողովների կազմակերպամբ, գիտահետազոտական գործունեության զարգացմամբ, գիտահետազոտական աշխատանքների իրականացման խրախուսման և զարգացման մեխանիզմների ներդրմամբ:

2024 թվականի համար պլանավորված 6 խնդիրները պահանջում էին 11 գործողություն, որից իրականացել է միայն 5 գործողություն՝ 45,5%:

Սեպտեմբերի 19-ին միջազգային համագործակցությամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել է միջազգային աշնանային դպրոց, որը նվիրված էր ԵՊՀ ԻՄ հիմնադրման 30-ամյակին: Աշնանային դպրոցը ուսումնասիրել է լոկալ ժառանգությունը և ներառել է գիտական սեմինարներ ու թեմատիկ քննարկումներ:

Այս աշնանային դպրոցը կարևոր քայլ էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգային համագործակցության մեջ: Զալցբուրգի համալսարանի և ՀՀ ԳԱԱ հետ այս համագործակցությունը նպաստում է կրթական և գիտական փորձի փոխանակմանը՝ ուսանողներին հնարավորություն տալով մասնակցելու միջազգային նախագծերի:

ԵՊՀ ԻՄ-ն տարբեր կազմակերպությունների հետ ստորագրել է համագործակցության պայմանագրեր, համաձայնագրեր և հուշագրեր, որոնք ընդգծում են համալսարանի հետագա զարգացումը՝ շեշտելով կրթական, գիտական և սոցիալական ոլորտներում համագործակցությունը:

Համագործակցության պայմանագրերը չեն սահմանափակվում միայն կրթության և գիտության ոլորտներով: Դրանք նաև ներգրավում են մշակույթ (հայ-ֆրանսիական բարեկամություն), տվյալների թվայնացում (Ռեստարտ ՀԿ), ժառանգություն և հայրենաճանաչություն (Մունետիկ) և այլ ոլորտներ: Համագործակցության այս

բազմազանությունը ցույց է տալիս համալսարանի բազմակողմանի մոտեցումը՝ գիտության, կրթության, մշակույթի և հասարակության տարբեր ասպեկտների ընդլայնմանը։

Արտերկրյա համալսարանների հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականից Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը և Սլովակիայի Պրեշովի համալսարանը համատեղ իրականացնում են Էրազմուս+ Միջազգային շարժունության ծրագիր, որը աջակցում է անձնակազմի և ուսանողների ներգնա և արտագնա շարժունությանը։

Մինչ այդ հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ համագործակցությամբ Էրազմուս+ ծրագրին մասնակցել են ԵՊՀ ԻՄ 3 ուսանողներ.

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Վիկա Հակոբի Մելիքբեկյանը 27.09.2023թ. - 09.02.2024թ. ուսուցումը իրականացրել է Պոմրանիայի համալսարանում (Լեհաստան, ք. Սպուլսկ)։

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Ռաիսա Նիկոլայի Փիրումյանը 01.02.-05.07.2024թ. ուսուցումը իրականացրել է Վալյադոլիդի համալսարանում (Իսպանիա)։

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողուհի Արաքսի Նիկոլայի Միսկարյանը 01.03.-31.08.2024թ. ուսուցումը իրականացրել է Աաենի համալսարանում (Գերմանիա)։

Գիտահետազոտական գործունեության զարգացման և բարելավման նպատակով վերանայվել են գործող փաստաթղթերը և համապատասխանեցվել են ԵՊՀ գործող կարգերին։

<u>Չեն իրականացվել</u> գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ մագիստրոսական կրթական ծրագրերի իրականացումը, Դասախոսական կազմի վերապատրաստումները՝ հոդված գրելու կարողությունների զարգացման համար, «Տարվա հետազոտող» մրցանակաբաշխության կազմակերպումը, Հետազոտական գործունեությունը համակարգող համամասնաճյուղային կենտրոնի (ՀԳՀԿ) ստեղծումը, Միջգիտակարգային հետազոտությունների իրականացումը, ՀՀ Բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ նախագծերի իրականացումը, Գիտական արդյունքների առևտրայնացման ուղղված գործընթացների իրականացումը։

2024թ.-ից ներքին դրամաշնորհային մրցույթում առաջնահերթություն է տրվել նաև միջգիտակարգային հետազոտական ծրագրերին, առանձին կետով հատկացնելով 1, 000 000 դրամ։

Ընթացիկ տարում նախատեսվում է իրականացնել հոդված գրելու, Սկոպուսային ամսագրերին դիմելու և մասնակցելու, նորագույն գիտական շտեմարաններում տպագրվելու հոդվածների զարգացման շուրջ մի շարք վերապատրաստումներ:

ԵՊՀ ԻՄ ռազմավարական **երրորդ նպատակը նախատեսում էր** հանրային ներգրավում:

Այս նպատակի համար նախատեսված 4 խնդիրների իրականացման համար **հիմնական խոչընդոտները** կապված են եղել լրացուցիչ և ոչ ֆորմալ ծրագրերի և լրացուցիչ պրակտիկաների իրականացման հետ: Մասնաճյուղի կողմից ուսումնասիրվել են տարածաշրջանի պահանջարկները, աշխատաշուկան, մշակվել են գործընթացի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն գործողությունները՝ ռեսուրսների և ժամանակի սղության պատճառով դեռևս **չեն իրականացվել**:

Այս ոլորտում մասնաճյուղի ձեռքբերում կարելի է համար միջազգայնացման առաջընթացը:

ԵՊՀ ԻՄ-ն վերջին տարիներին ակտիվորեն ստորագրել է միջազգային համագործակցության պայմանագրեր մի շարք արտերկրյա բուհերի հետ՝ ընդգրկելով տարածաշրջաններ, ինչպիսիք են Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ավստրիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Սլովակիան: Այս համագործակցությունները նպաստում են տարբեր կրթական և գիտական փորձի փոխանակմանը, ինչպես նաև բուհերի միջև մասնագիտական կապերի հաստատմանը:

Համալսարանի միջազգայնացումը ակտիվացնում է ուսումնառության, գիտական աշխատանքների և պրակտիկայի միջոցով ուսանողների միջազգային հնարավորությունները: Համագործակցությունները ընդգրկում են տարբեր ոլորտներ՝ կրթություն, գիտություն, մշակույթ, մասնագիտական պատրաստություն: Այս համագործակցությունների շրջանակում իրականացվող համատեղ դպրոցները, համաժողովները, դասախոսությունները օգնում են համալսարանին մնալ գլոբալ կրթական ու գիտական գործընթացների մաս:

Մասնաճյուղը վերջին տարիներին կազմակերպել է մի շարք միջազգային գիտաժողովներ և համաժողովներ, որոնցում մասնակցել են տարբեր երկրների ներկայացուցիչներ: Օրինակ, 2024թ. կազմակերպվել է «Զբոսաշրջության և ռեկրեացիայի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով գիտաժողովը, որը նվիրված էր ԵՊՀ ԻՄ հիմնադրման 30-ամյակին:

Գիտաժողովներն ու համաժողովները ներկայացնում են բուհի մեծ հնարավորությունները՝ ի ցույց դնելով հետազոտական աշխատանքները և առաջարկելով

ուսանողներին մասնակցել բարձրակարգ քննարկումների։ Միջազգային գիտաժողովները միտված են գիտության ոլորտում մասնագետների և պրոֆեսիոնալների միջև համագործակցության խթանմանը։

Մասնաճյուղի միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպվել են տարբեր դասախոսություններ, պրակտիկաներ և ծրագրեր, որոնցում մասնակցել են միջազգային մասնագետներ՝ մասնավորապես ամերիկացի պրոֆեսոր Թոմաս Ռ. Բեյերը, Պրեշովի համալսարանի պրոֆեսոր Ա. Պետրիկովան, ինչպես նաև Մոսկվայի պետական լեզվաբանական համալսարանի ներկայացուցիչները։

Այս դասախոսություններն ու պրակտիկաները հնարավորություն են տալիս ուսանողներին ձեռք բերել նոր գիտելիքներ ու փորձեր, ինչպես նաև կարող են զարգացնել նրանց մասնագիտական հմտությունները։ Պրոֆեսորների այցելությունները նաև նպաստում են համալսարանի դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը։

ԵՊՀ ԻՄ-ը մասնակցում է «Էրազմուս+» ծրագրին, որը հնարավորություն է տալիս ուսանողներին և դասախոսներին մասնակցել միջազգային կարճաժամկետ կրթական շարժունության ծրագրերին։ Ապրիլ ամսին հյուրընկալվել է Պրեշովի համալսարանի պրոֆեսոր Աննա Պետրիկովան, որի այցը նպաստել է մանկավարժական փորձի փոխանակմանը և երկու բուհերի միջև համագործակցության ամրապնդմանը։

Մասնաճյուղի ուսանողները մասնակցել են բազմաթիվ միջազգային միջոցառումների, արժանացել դիպլոմների և հաջողությունների։ Օրինակ, «Ռոսսոտրուդնիչեստվոյի» կողմից կազմակերպված «Ռուսաց լեզվի մագիստրոսներ» մրցույթում հաղթած ուսանողները անց են կացրել պրակտիկա, դասավանդել են ԵՊՀ ԻՄ-ում և կազմակերպել կրթական միջոցառումներ մարզի դպրոցներում։

Հաշվետու ամսում մասնաճյուղի ուսանողները մասնակցել են մի շարք միջազգային միջոցառումների և գիտաժողովների, հանդես են եկել զեկույցներով և արժանացել են բարձր կարգի դիպլոմների։ Ուսանողների միջազգային մրցույթներում ձեռք բերած հաջողությունները վկայում են մասնաճյուղի բարձր կրթական մակարդակի մասին և ուժեղացնում համալսարանի միջազգային ճանաչումը։

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջազգայնացման ջանքերը, ներառյալ միջազգային համագործակցությունները, գիտաժողովները, պրակտիկաները, դասախոսությունները և ուսանողական հաջողությունները, կարևոր դեր ունեն համալսարանի կրթական, գիտական և սոցիալական զարգացման գործում։ Միջազգային կապերի ընդլայնումը, ուսանողների և

դասախոսների փոխանակումը, ինչպես նաև համատեղ ծրագրերը հարստացնում են մասնաճյուղի կրթական միջավայրը և զարգացնում ուսանողների գիտելիքները։

Միջազգայնացման ոլորտում բարձր մակարդակով հանդես գալու նպատակով 2024 թվականի սեպտեմբերից մասնաճյուղում պաշտոնապես գործարկվել է նոր կայքը, եռալեզու տարբերակով։ Մասնաճյուղի նոր կայքում առանձին բաժնով ներկայացված է մասնաճյուղի միջազգայնացումը, միջազգային համագործակցությունները և ընթացիկ ծրագրերը։ Կայքում բոլոր նյութերը՝ բացառությամբ ուսումնական ընթացիկ գրաֆիկները, ներկայացված են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով։

Հատուկ ուշադրություն է դարձվել նաև մարքեթինգային գործունեությանը։ Մասնաճյուղում մարքեթինգային գործընթացների նպատակով օգտագործվում են պաշտոնական կայքէջում տեղեկատվության լիարժեք ապահովումը, կրթական ծրագրերի բաց հասանելիությունը, հիմնական փաստաթղթերի և հայտարարությունների ու նորությունների եռալեզու հրապարակումը։ Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը հանդես է եկել երկու մեծ ցուցահանդեսների, իրականացնում է ճանաչողական այցեր և ընդունելություններ։ Նաև տպագրվել և տարածվել են մասնաճյուղը ներկայացնող բուկլետներ, թռուցիկներ, էջանիշներ, մասնաճյուղի տարբերանշանով տարատեսակ իրեր՝ բաժակ, գրիչ, նոթատետր, ֆայլ և այլն։ Ամառային դպրոցի իրականացման ընթացքում մասնաճյուղի կողմից հրատարակվել է բուկլետ՝ անգլերեն լեզվով, որը մասնակիցների կողմից տարածվել է այլ բուհերում՝ մասնավորապես ԱՄՆ-ի Այովայի համալսարանում։

Հանրային ներգրավման ոլորտում 2024 թվականին պլանավորված 13 գործողություններից իրականացվել է 8 գործողությունը՝ **61%**։

2 գործողություն իրականացվել է մասամբ՝ միջազգայնացման քաղաքականությունը և գործողությունների պլանը մշակվել, սակայն դեռ հաստատված չեն։

Շրջանավարտների միության ստեղծման գործընթացը սկվել է ԵՊՀ-ում և ներառում է նաև մասնաճյուղի շրջանավարտներին։

Մասնաճյուղի հնարավորությունների և ծառայությունների փաթեթի մշակումը և առևտրայնացումը նախատեսվում է իրականացնել հաջորդող ռազմավարական պլանով։

Միջազգային վարկանիշային համակարգերում ընդգրկվելու գործընթացը չի իրականացվել, քանի որ մասնաճյուղը չի կարող ներկայանալ, որպես առանձին ուսումնական հաստատություն։